COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE
Committee of Ministers
Comité des Ministres

**CM/ResCMN(2012)1 բանաձեւ**

**Հայաստանի կողմից Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ**

*(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2012 թվականի փետրվարի 1–ին, նախարարների տեղակալների 1132–րդ նիստում)*

Նախարարների կոմիտեն, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ «Շրջանակային կոնվենցիա») 24–ից 26–րդ հոդվածների դրույթների համաձայն,

հաշվի առնելով Շրջանակային կոնվենցիայի 24–ից 26–րդ հոդվածների դրույթների համաձայն Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ «Դիտանցման պայմանների մասին» կանոններ սահմանող 1997 թվականի սեպտեմբերի 17–ի Res(97)10 բանաձեւը[1],

հաշվի առնելով Res(97)10 բանաձեւի ընդունման համատեքստում ընդունված քվեարկության կանոնները,

հաշվի առնելով Հայաստանի կողմից 1998 թվականի հուլիսի 20–ին ներկայացված վավերացման մասին փաստաթուղթը,

վկայակոչելով, որ Հայաստանի Կառավարությունը փոխանցել է դիտանցման երրորդ պարբերաշրջանի վերաբերյալ իր պետական հաշվետվությունը՝ 2009 թվականի հուլիսի 5–ի Շրջանակային կոնվենցիայի համաձայն,

ուսումնասիրելով Խորհրդատվական կոմիտեի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14–ին կայացրած Հայաստանի մասին երրորդ եզրակացությունը, եւ 2011 թվականի ապրիլի 20–ին ստացված Հայաստանի Կառավարության գրավոր մեկնաբանությունները,

հաշվի առնելով նաեւ այլ կառավարություններից ստացված դիտողությունները,

[1] 1997 թվականի սեպտեմբերի 17–ի Res(97)10 բանաձեւի ընդունման համատեքստում, Նախարարների կոմիտեն եւս ընդունել է հետեւյալ կանոնը՝ «Շրջանակային կոնվենցիայի 4.1 եւ 25.2 հոդվածներին համապատասխանող որոշումները պետք է քննարկման դրվեն ընդունելու համար, եթե Պայմանավորվող կողմերի քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների երկու երրորդը, այդ թվում՝ Նախարարների կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների մեծամասնությունը կողմ է քվեարկել»:

**1. Ընդունում է հետեւյալ եզրակացությունները Հայաստանի վերաբերյալ.**

**ա) Դրական զարգացումները**

Հայաստանը ցուցաբերել է կառուցողական մոտեցում դիտանցման գործընթացի նկատմամբ եւ ձեռնարկել որոշակի միջոցներ՝ տարածելու համար դիտանցման առաջին երկու պարբերաշրջանների արդյունքները: Իշխանությունները նաեւ պահպանել են բազմակողմանի մոտեցում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս:

Հայաստանում ազգային փոքրամասնությունների եւ բնակչության մեծամասնության միջեւ գերակայում է հանդուրժողականության եւ ըմբռնման ընդհանուր մթնոլորտը, եւ իշխանությունները շարունակում են ցուցաբերել բազմակողմանի մոտեցում Շրջանակային կոնվենցիայի գործողության ոլորտի նկատմամբ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները չեն զեկուցել իրենց համայնքների անդամների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի մասին:

Չնայած Հայաստանի վրա ազդող տնտեսական դժվարություններին՝ իշխանությունները շարունակում են ֆինանսական ռեսուրսներ տրամադրել՝ խթանելու համար ազգային փոքրամասնությունների ավանդույթները եւ մշակույթները:

Կոմունիստական վարչակազմի ժամանակ բռնագանձված եկեղեցու սեփականությունը վերադարձվել է ասորական եւ ռուսական ուղղափառ համայնքներին:

Հայկական հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության ծառայությունները հեռարձակում են հաղորդումներ ազգային փոքրամասնությունների համար, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների լեզվով: Ընդհանուր առմամբ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները նշել են, որ իրենց առնչվող հարցերը լուծվում են արդար եւ հավասարակշռված եղանակով:

Ազգային փոքրամասնությունների լեզուները ուսուցանվում են դպրոցներում, եւ ջանքեր են գործադրվել ազգային փոքրամասնությունների լեզուները ուսուցանելու համար նախատեսված գրքերի տպագրման համար: Համալսարանի ընդունելության քննությունները բարեհաջող հանձնած ազգային փոքրամասնություններին պատկանող թեկնածուներին ընդունելուն առաջնահերթություն տալը զգալիորեն նպաստել է այդպիսի թեկնածուների ընդունելությանը համապատասխան բարձրագույն կրթական հաստատություններ:

## բ) Մտահոգող հարցերը

Չնայած ողջունելի է, որ ազգության (էթնիկ) պատկանելության մասին 2011 թվականի հոկտեմբերի մարդահամարի շրջանակներում տրվող հարցը չէր կրում պարտադիր բնույթ, այնուամենայնիվ, առավել նպատակահարմար կլիներ միջազգային ստանդարտներին համապատասխան առաջարկել հնարավոր պատասխանների անսահմանափակ ցանկ՝ պատասխանողների իրավունքը ապահովելու համար, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ կերպով ցույց տալ յուրաքանչյուր անհատի ընտրությունը:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում բարեփոխումների ծրագրերով պահանջվում է շարունակական խորհրդակցություններ անցկացնել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ՝ համոզվելու համար, որ առաջարկվող փոփոխությունները բացասաբար չեն անդրադառնում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական մակարդակով հանրային գործերին արդյունավետ կերպով մասնակցելու իրավունքի վրա:

Դեռեւս չի ընդունվել խտրականությունը բացառող որեւէ համապարփակ իրավական ակտ, եւ այս ոլորտում դեռեւս բացակայում են վստահելի վիճակագրական տվյալները:

Այն հազվադեպ հակահրեական հայտարարությունները, որոնք արվել են որոշ լրատվամիջոցների կողմից, չեն ստացել համարժեք արձագանք իշխանությունների եւ հանրության կողմից:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում 2008 թվականին կատարված փոփոխություններով սահմանվեցին հանրային ռադիոյով օրական մեկ ժամ եւ հանրային հեռուստատեսությամբ շաբաթական երկու ժամ ազգային փոքրամասնության լեզվով հեռարձակման առավելագույն եթերաժամը՝ այսպիսով սահմանափակելով փոքրամասնությունների մուտքը հանրային լրատվամիջոցներ:

Ռուս, բելառուս եւ ուկրաինացի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ծննդյան եւ ամուսնության վկայականներում եւ ինքնությունը հաստատող փաստաթղթերում հայրանունները հայերենով թարգմանելիս/վերարտադրելիս հաշվի չեն առնվում տվյալ լեզուների քերականական կանոնները, եւ ուստի, դրանք չեն համապատասխանում 11-րդ հոդվածին, 1 պարբերությանը, եւ Շրջանակային կոնվենցիայի բազմակողմանի մեկնաբանության ընդհանուր սկզբունքին:

**2. Ընդունում է հետեւյալ առաջարկությունները Հայաստանի վերաբերյալ.**

Խորհրդատվական կոմիտեի եզրակացության 1–ին եւ 2–րդ բաժիններում ներառված մանրամասն առաջարկությունների իրականացման համար միջոցներ ձեռնարկելուց բացի՝ իշխանություններին կոչ է արվում ձեռնարկել հետեւյալ միջոցները Շրջանակային կոնվենցիայի հետագա իրականացմանը նպաստելու համար:

**Անհապաղ գործողություններ պահանջող խնդիրները[2]**

- ապահովել, որ հետագա մարդահամարների համար առկա լինեն համապատասխան ընթացակարգեր, ինչպես նաեւ տվյալների հավաքագրման այլ եղանակներ՝ տրամադրելու համար ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասին վստահելի տվյալներ՝ առանձնացված ըստ տարիքի, սեռի եւ աշխարհագրական դիրքի, բոլոր համապատասխան ոլորտներում՝ համաձայն ազատ ինքնանույնականացման եւ միջազգային մակարդակով տվյալների հավաքագրման եւ պաշտպանության ստանդարտների,

- շարունակել խորհրդակցել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ տեղական ինքնակառավարման համակարգում բարեփոխումների ծրագիր կազմելիս եւ իրականացնելիս՝ ապահովելու համար, որ առաջարկվող փոփոխությունները բացասաբար չանդրադառնան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական մակարդակով հանրային գործերին արդյունավետ կերպով մասնակցելու իրավունքի վրա:

**Հետագա առաջարկությունները**

- միջոցներ ձեռնարկել՝ ամրապնդելու համար խտրականությունը բացառող իրավական ակտերը,

- շարունակել աջակցությունը ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների մշակութային գործունեությանը,

- ապահովել ավելի արդյունավետ դիտանցում ռասայական, հակահրեական կամ այլատյացության դրդապատճառներով իրականացված հանցանքների նկատմամբ եւ հետաքննել ու դատական կարգով հետապնդել հանցագործներին,

[2] Ստորեւ նշված առաջարկությունները թվարկված են Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հերթականության համաձայն:

- ուղիներ գտնել բարելավելու հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության մասին առկա օրենսդրական դրույթները՝ երաշխավորելու համար փոքրամասնության լեզվով հեռարձակման նվազագույն ժամանակահատվածը,

- խորհրդակցել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ պաշտոնական փաստաթղթերում նրանց անունների արտագրման շուրջ:

**3. Կոչ է անում Հայաստանի Կառավարությանը՝ համաձայն Res(97)10 բանաձեւի՝**

ա. շարունակել Խորհրդատվական կոմիտեի հետ ընթացիկ երկխոսությունը,

բ. պարբերաբար տեղյակ պահել Խորհրդատվական կոմիտեին այն միջոցների մասին, որոնք վերջինս ձեռնարկել է՝ որպես պատասխան վերոնշյալ 1–ին եւ 2–րդ բաժիններում սահմանված եզրակացություններին եւ առաջարկություններին: